Նամակին մէջ չենք գտներ Շահին հիւանդութեան անունը, սակայն մեզ կը թուի որ Ջրգողութիւն ըլլայ, որովհետև իր վերջին տարիներուն մէջ ատկէ բռնուած ըլլալը կը հաւաստուի[1]։ Անոր կեանքը, ինչպէս յայտնի է, սպանութեամբ վերջ կը գտնէ։

Գերյարգելոյ Տեառն Տեառն Մխիթարայ Աբրայի Հօրդ մերոյ

. . . Դահմազդուլին հիւանդացեալ կոչեալ է զբժիշկս. և ոչ ոք զնա կարացեալ է բուժել. և պատրի ոմն քափուճին գնացեալ առ նա՝ բժշկեալ է զնա։ Եւ յետ որոյ ա-սացեալ է պատրուոյն. խնդրեա՛ յինէն զինչ կամիս. առ որ պատասխանեալ է պատրին թէ ես զդրամ ինչ ոչ խնդրեմ, զի հրաժարեալ եմ ես յամենայն ընչից. այլ խնդրեմ ի քէն, զի քաջայեցեալ եկեղեցիք մեր ի Թիֆլիս չինեսցին։ Եւ ասէ ո՞վ արար զայնս՝ ասէ պատրին՝ Ղալիֆայն որ է հայոց կաթուղիկն։ Եւ դահմազդուլի իսկոյն հրամայէ առածել յինքն զղալիֆայն. և տայ զնա երեք օր և երեք գիշեր կախեալ մնալ ի թևոց նորա. յետ այնորիկ հրամայէ նմա տալ պատրուոյն զ80 քսակ դրամ, եօթն հազար ուղտ՝ եօթն հազար ջորի, եօթն վարիչ եզ, որպէս զի այնոքիւք չինիցին տապալեալ եկեղեցիք պատճառաւ ղալիֆային։ Գաղատացի կարգաւորք որք աստի գնացեալք եղեն յերկիրն իւրեանց՝ մեծօք փառօք մտեալք ի վանս և յեկեղեցիս, և տիրապետեալք են զնոսա. և յիշխել ամենից դէմից իւրեանց, որք են 25։ Բայց ի Հալէպ խառնակութիւն ինչ եղեալ իցէ, յորմէ արտուղղայք հալածումն յարուցեալք իցեն։ Բայց ըստ որում ասա ասի, և նա ուղղի։ . . . .

Գերապայծառութեան ձերում
Նուաստագունեղ ծառայ
ս. տ. ս. Հայր Պօղոս Վարդապետ

Ցամի տեառն 1743
և մայիսի 28
[Կ. Պոլիս]

ՃԻԱ.

Միջանկեալ դէպքերով նախ տարաբախտ Սուքիաս կարծեցեալ եպիսկոպոսին յետին կարեկցական պահերը կը նկարագրուին մանրամասն. յետոյ կը յիշատակուին Աբրահամ-Պետրոսի Հռովմայ վերջին օրերու շրջանէն քանի մը զժուարին պարագա-ներ, որոնք կաթողիկոսին կենսագրական պատմութեան հետ ուղղակի աղերս ունին։

Գերյարգելի և գերապատուելի տեառնդ իմոյ յոյժ սիրով և խոնարհութեամբ ողջոյն մատուցանեմ

. . . Ի կողմանէ գերապայծառ Պատրիարքին մերոյ յայտ լիցի հրամանուցդ որ երբ սա Հրոմ եկաւ, մառոնիք, եւս առաւել մոնսինեօր ասիմանն մեծաւ սիրով պատվէին զնա. նաև որպէս այլ անգամ ծանուցի փափն և ոմանք կարտինալք յոյժ սէր ցուցին նմա. բայց գնալու ժամանակն այլ կերպ փոխվեցաւ բանն, ոչ փափին կողմանէ, այլ կարտինալ փէթրան և ասիմանն հանդերձ այլ մառոնիք երես դարձուցին ի նմանէ. այս այս երկու պատճառաւս, մինն Սուքիաս վարդապետին կողմանէ կարտինալ Փէթրան հրաման առաւ իւրեան առ ի վերստին ձեռնադրել քահանայ և եպիսկոպոս վերոյիշեալ տէր սուքիասն. և սա դէմ եկաց հրամանի նորին, գնաց և ծանոյց փափին զանազան արքելմունս Սուքիաս վարդապետին կողմանէ, և հրաման էառ ոչ օծել զնա եպիսկոպոս.

1. «La Grande Encyclopédie», Tome XXIV, Paris.